# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2025թ. N 518-Ա

ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ԹԻՎ 1 ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆ ԹԻՎ 29 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Անահիտ Պավլովնա Ալեքսանովայի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Անահիտ Պավլովնա Ալեքսանովային ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող քաղաք Բյուրեղավան թիվ 1 հանրակացարան թիվ 29 բնակարանի (վկայական N 029964, տրված՝ 1998 թվականի նոյեմբերի 17-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝ Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 42 շենք 29 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2025թ. N 519-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ԹԻՎ 34 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5.1-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Ալավերդի Իսյանիչ Իսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի քաղաքապետի 1998 թվականի մայիսի 27-ի «Ալավերդի Իսյանի կողմից ինքնակամ կառուցված տունը օրինականացնելու մասին» թիվ 34 որոշման նախաբանում «Իսյայի» բառը փոխարինել «Իսյանիչ» բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

07 հոկտեմբերի 2025թ. N 520-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՏԱՅՔԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1994 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5.1-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Նվեր Կոմունարի Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության պատգամավորների Կոտայքի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի հոկտեմբերի 31-ի «Բնակարանը սեփականաշնորհելու մասին» թիվ 10 որոշման նախաբանում «վեց» բառը փոխարինել «հինգ» բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2025թ. N 521-Ա

## ՎՐԵԺ ԱՍՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Վրեժ Ասրյանի ներկայացուցիչ Գագիկ Եղիազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն թաղամասի 1-ին փողոց 216 (ծածկագիր՝ 07-051-0101-0030, վկայական N 27102020-07-0130) հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.04987 հեկտար մակերեսով հողամասում գոյություն ունեցող 65.3 քմ մակերեսով ինքնակամ շինության քանդման, երկհարկանի բնակելի տան, հարթակի, պարսպի և հենապատի կառուցման նպատակով Վրեժ Ասրյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի (N ՇԹ/772/15310-25 շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2025թ. N 522-Ա

### ՌՈԲԵՐՏ ՊՌԱԶՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Ռոբերտ Պռազյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Միկրոբ թաղամաս 67 (ծածկագիր՝ 07-051-0119-0007, վկայական N 14072025-07-0084) հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.05 հեկտար մակերեսով հողամասում ամառային խոհանոցի, պարսպի և լողավազանի կառուցման նպատակով Ռոբերտ Պռազյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի (N ՇԹ/772/15307-25 շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2025թ. N 523-Ա

### ԱՇՈՏ ԱՄՐՈՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Աշոտ Ամրոյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Այգետարածք Շինարար թաղամաս 3-րդ փողոց 1 (ծածկագիր՝ 07-051-0158-0136, վկայական N 27052025-07-0152) հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.125021 հեկտար մակերեսով հողամասում օժանդակ շինության, ծածկի և պարսպի կառուցման նպատակով Աշոտ Ամրոյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի (N ՇԹ/772/15305-25 շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2025թ. N 524-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Արա Վոլոդյայի Ոսկանյանի լիազորած անձ Վոլոդյա Սերոբի Ոսկանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Արա Վոլոդյայի Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Նուռնուս այգեգործական զանգված թիվ 222 անշարժ գույքի (վկայական 1709454, տրված՝ 2003 թվականի դեկտեմբերի 26-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն թաղամասի 1-ին փողոց 107:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2025թ. N 525-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 28-ի N 70-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 07-ի N 10/25 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1.2025 թվականի համար «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նկատմամբ Անժելա Գագիկի Վարտիկյանի (ծնված՝ 2012 թվականի հունվարի 06-ին) համար կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝ սկսած 2025 թվականի հոկտեմբերի 01-ից:

2.«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝
1) ապահովել կիրառված արտոնության կատարումը.
2)արտոնությունից օգտվողների կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2025թ. N 526-Ա

## «ԹԻ ԷՍ ՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, հիմք ընդունելով «Թի ԷՍ Ջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը և վճարման անդորրագիրը՝ ***որոշում եմ.***

1.«Թի ԷՍ Ջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 08291069) տալ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղի Երևան-Սևան մայրուղի 25-26 կմ հասցեներում գտնվող լցավորման կայաններում՝ 2025 թվականի հունվարի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար (N 36-25 թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2025թ. N 527-Ա

## «ԹԻ ԷՍ ՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, հիմք ընդունելով «Թի ԷՍ Ջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը և վճարման անդորրագիրը՝ ***որոշում եմ.***

1.«Թի ԷՍ Ջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 08291069) տալ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղի Երևան-Սևան մայրուղի 25-26 կմ հասցեներում գտնվող լցավորման կայաններում՝ 2025 թվականի հունվարի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար (N ՀՎ-35-25 թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հոկտեմբերի 2025թ. N 528-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 487-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի աճուրդների կազմակերպման և անցկացման հանձնաժողովի զեկուցագիրը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 19-ի «Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու համար աճուրդ հայտարարելու մասին» N 487-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման և որոշման հավելվածի 2-րդ կետերում «21» և «10:00» թվերը համապատասխանաբար փոխարինել «24» և «11:00» թվերով.

2) որոշման հավելվածի 10-րդ կետում «15» թիվը փոխարինել «20» թվով.

3) որոշման հավելվածի աղյուսակի 23-րդ կետում «0.0503» թիվը փոխարինել «0.05003» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 08
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հոկտեմբերի 2025թ. N 529-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի N 513-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի աճուրդների կազմակերպման և անցկացման հանձնաժողովի զեկուցագիրը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 03-ի «Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերն օտարելու համար աճուրդ հայտարարելու մասին» N 513-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման և որոշման հավելվածի 2-րդ կետերում «21» և «14:00» թվերը համապատասխանաբար փոխարինել «24» և «10:00» թվերով.

2) որոշման հավելվածի 10-րդ կետում «15» թիվը փոխարինել «20» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 08
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2025թ. N 530-Ա

## ՍԼԱՎԻԿ ՑԳՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետի, 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 42-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 29-ի N 60-Ն որոշումը, «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված 2016 թվականի մայիսի 4-ի N Հ-3981 արխիվային տեղեկանքը, չափագրման հատակագծերն ու Սլավիկ Սարուխանի Ցգունյանի լիազորած անձ Գևորգ Նիկոլայի Հովսեփյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Փոփոխել Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի 10-րդ զանգվածի թիվ 5 հասցեին Սլավիկ Սարուխանի Ցգունյանին պատկանող, Բյուրեղավան համայնքին սխալմամբ գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք փոխանցված (կադաստրային ծածկագիր՝ 07-003-0011-0100-ից) 0.05 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ դարձնելով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 09
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

10 հոկտեմբերի 2025թ. N 531-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 15-Ն որոշմամբ հաստատված կարգը՝ ***որոշում եմ.***

1.2025 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև 28-ը ներառյալ Բյուրեղավան համայնքում կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի եկեղեցու հարակից քաղաքային զբոսայգու հիմնանորոգման աշխատանքներ» սուբվենցիայի ծրագրի հանրային քննարկումներ:

2.Հանրային քննարկումները կատարվելու են Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքի միջոցով՝ http://byureghavan-kotayk.am/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 10
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հոկտեմբերի 2025թ. N 532-Ա

## ԱՇԽԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը, ծածկը, զուգարանը և պարիսպը կառուցվել են 2015 թվականին, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և հիմք ընդունելով չափագրման հատակագծերը, «ՀԱԲՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված 2025 թվականի սեպտեմբերի 26 -ի տեխնիկական եզրակացությունն ու Աշխեն Խաչիկի Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Աշխեն Խաչիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Նուռնուսի այգետարածքի թիվ 226 անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0101-0020) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն թաղամասի 1-ին փողոց 115:

2.Քաղաքացի Աշխեն Խաչիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն թաղամասի 1-ին փողոց 115 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0101-0020, հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագրեր՝ 2023UKMSMH) 0.0555 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 56.5 քմ արտաքին (45.3 քմ ներքին) մակերեսով բնակելի տունը, 3.9 քմ մակերեսով ծածկը, 2.7 քմ արտաքին (1.7 քմ ներքին) մակերեսով զուգարանը և 3.7 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3. Աշխեն Խաչիկի Խաչատրյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 94989,6 (իննսունչորս հազար ինը հարյուր ութսունինը ամբողջ վեց տասնորդական) դրամ՝ 2015 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան, ծածկի, զուգարանի և պարսպի օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումն համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 10
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հոկտեմբերի 2025թ. N 533-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, Թեհմինե Բաբկենի Վարդանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղում գտնվող անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0002-0014) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 14-րդ փողոց 10/2:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 10
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հոկտեմբերի 2025թ. N 534-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 33-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով «Տարբերնյութմեծառ» փակ բաժնետիրական ընկերության լիազորած անձ Կարապետ Մկրտիչի Ազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.«Տարբերնյութմեծառ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 51/1 (վկայական N 09032023-07-0135) անշարժ գույքի բաժանվող մասերին տրամադրել հասցեներ՝

1) 0.0049 հեկտար մակերեսով առանձնացվող մասին՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 51/8.

2) 2.2833 հեկտար մակերեսով մնացորդային մասին՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 51/1:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեների գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 10
ք. Բյուրեղավան